

կուրծքը դրած՝ ուսերը շարժելով ըսաւ .

— Յարգոյ տէր, մեք երկուքնիս կարող չենք բոլոր աշխարհքը լաւ վիճակի հասցընել . մարդուս զմարդկութիւն կըրթելու ջանքը գովելի է՝ բայց միշտ անօգուտ : Երթանք երթանք, սեղանի նշան տուին . մէկդի թողունք հիմա աշխարհիս պատշաճ սեպուած բոլոր դարմանները, և սեղանին տուածէն քիչ մը զօրացնենք զմեզ : Տէր իշխան և յարգելի տէր, կը յուսամ որ արժանի կը համարիք իմ հրաւէրս ընդունելու . մանաւանդ որ այսօր ինծի փափագելի է ձեզի հետ զուարճութեամբ օրս անցնել :

Այսպէս ըսելով հիւրընկալ իշխանը անցաւ երկու մեծարոյ հիւրերուն մէջը և զանոնք թևոցը մէջ առնելով տարաւ խօսակցելով զէպ 'ի տուն . և ուսուցչին պատուիրեց որ ինքն ալ տղոց հետ շուտով վեր գայ : Քահանային խօսակցութիւնը հիւրընկալ իշխանին վրայ ամենևին ազդեցութիւն չէին ըրած, իսկ ընդհակառակն ուսուցչին մեծ տպաւորութիւն ձգեր էին : Նոյն իսկ քահանային մտերիմ իշխանը, որ հաստատուն կը փափաքէր տղոց քրիստոնէավայել կրթութեանը, սակայն կը կարծէր թէ քահանայն իր բարի նախանձաւորութեանը մէջ չափը անցուցած էր : Սեղանին վրայ տանտէր իշխանը մեծ ուրախութիւն կը ցուցընէր, և ամեն նոր համեղ կերակուր մը սեղանին վրայ գալու ատեն թողութիւն կը խնդրէր սեղանոյն պարզութեանը համար, ըսելով .

— Բոլորովին տարբեր պատրաստութիւն կը տեսնայի եթէ առաջուց գուշակէի թէ այսօր պատիւ պիտի ունենամ ձեր այցելութիւնը ընդունելու :

Այս սնապարծ խօսքերը քահանային անախորժ կու գային և ձանձրութիւն կը բերէին վրան : Քահանային վարժապետին հետ ըրած վարմունքը կը յայտնէին անոր վրայ գէշ համարումն ունենալը : Իսկ վարժապետն ալ տղոց հետ խօսակցելով կը ջանար անոնց սիրտը շահիլ, և փոխանակ մեծանձնութեամբ

իրեն ձգելու զանոնք, անմտաբար անոնց ըրածին կը հետևէր, քահանային պատկառելի ներկայութիւնը բանի տեղ չդնելով՝ որ միայն իր բարւոյն համար խրատեր է զանիկայ . բայց ինքը 'ի բնէ հպարտ ըլլալով զայն խրատը նախատինք կը համարէր : Քահանայն ալ անոր ամեն ըրածը ուշադրութեամբ դիտելով ու կշռելով, միտքը դրաւ հաստատուն որ ալ չթողու իր բարեկամին տղայքը երկայն ատեն անոր կրթութեանը տակ :

Տղոց աղէկ դաստիարակութեանը համար ըլլալի փոփոխութիւնը փութացընելը լաւ չէր համարեր . վասն զի արդարախոհ անձ մ'ըլլալով ամեն բանի նախատես կ'ըլլար առաջուց : Իր նպատակը միայն տղոց բարոյական օգուտն էր . բայց նաև կերպ մը կը մտածէր վարժապետին սիրտն ալ չվշտացնելու . անոր համար Աստուծոյ օգնականութիւնը և օրհնութիւնը միշտ կը խնդրէր՝ գիտնալով որ առանց Աստուծոյ միջնորդութեանը անպտուղ կ'ըլլայ իր վաստակը :

Կը շարունակուի :

ԿԱԼԿԱԹՈՍԻ ԶՐԿԻՐՆԵՐԸ

Անոնք որ Հնդկաստան ջրկրի օգտակար արհեստը կ'ընեն պիսեչտի պարսիկ անուամբ կը կոչուին : Ինչպէս բոլոր այն ժողովուրդք՝ որ բացարձակապէս ընդեղէններով կը սնանին և շատ քիչ անգամ ոգելից ըմպելիքներ կը խմեն՝ այսպէս Հնդիկք ալ մեծապէս փոյթ ունին մաքուր զուտ ու զով ջուր ունենալու : Այն տակառները՝ որոնց մէջ Հնդիկք ջուրը կը կրեն՝ Քաւէր կը կոչուին . սակայն պատկերս ներկայացնող ջրկիրը՝ մորթէ տիկ մը կը գործածէ այս բանիս, որմէն մահմետական ըլլալը կ'իմացուի : Շատերը այս տիկերը իրենց կռնակը շալկած կը կրեն ու ջուրը աժան կը վաճառեն . այլք ասոր հակառակ՝ առջիներէն աւելի ճոխ, տիկը՝ ե-



ԿԱԼԿԱԹԱՅԻ ԶՐԿԻՐՆԵՐԸ

զան մը կռնակը կը բռնաւորեն : Եւ ա սով այս ետքիններս ջրոյ մեծագոյն քա նակ մը ասդիս անդին տեղափոխելու կարող ըլլալով, հնդկային քաղաքաց հեռագոյն կողմերն ալ ջուրը կը տանին : Բայց միայն անոնք որ վարժած են այս սովորութեան կարող են տիկերու մէջ պահուած ջուրը խմել, որ անախորժ համ մը կը ստանայ :

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՔ

Ամեն մարդ որ իր անձնական պատւոյն գիտակցութիւնն ունի, ռամիկ աւարտողականին խնդիրներէն վեր է վրան զի բուն քաղաքավարութիւնը, այն որ սրտէն և ազնուական զգացմունքէ առաջ կու գայ, ամեն երկիր մի և նոյն է . սակայն Անգղիա այն կանոնները՝ որոնց վրայ կը կայանան ընկերութեան դասակարգական աստիճանները, անանկ խիստ են և անանկ ճշդութեամբ կը պահուին, որ ամեն օտարական ուզէ չուզէ պէտք է այն տղայական քաղաքավարութեան օրէնքները սորվի՝ եթէ չուզեր իբր անսովոր մէկ մը և անկիրթ սեպուիլ :

Օտարականաց ամենէն սովորական սխալմունքներէն մէկը, կը գրէ ֆրանկ վէյ, *sir* տիտղոսը իրենց անձին սեփականելն է, որ միայն ասպետաց, պարոնայց, խորհրդարանի անդամոց և ուրիշ քաղաքական պաշտամունք ունեցող մարդիկներու կը տրուի : Սակայն ամենէն մեծ վրիպակը՝ այս *sir* տիտղոսը ընտանեաց մականուան նախադաս գրուիլն է, որ ըստ ինքեան միայն անձին յատուկ անուան կը նախադասուի :

Առջի ժամանակները՝ այն ամեն մարդիկ որ ծառայական վիճակէ չէին՝ այլ և ոչ տիտղոս մը ունէին՝ *Master* վերադրականով կը կոչուէին, որ հիմա միայն տղոց կը տրուի : Մասդրը *Լեւնպրըն*՝ *Լեմպրընի* պզտի տղայն է : Ստուարդներու ժամանակէն ետքը, մեծ մարդու մը

գրելով, պէտք է *Master* տիտղոսը համառօտել այսպէս *M*. ամբողջ գրելը՝ անքաղաքավարութիւն է : Տղոց նկատմամբ խօսելով *Master* ըսելու է, այլ երբ հասակաւոր մարդու մը վրայ կը խօսուի՝ էական բան է դիտելը որ *Mister* զուրցուի : Այսպէս ալ ոչ երբեք *Mistress* ամբողջ կը գրուի . այլ *Mrs.*, և կ'արտաբերուի միւսիս :

Աւելի դիտելի անկանոնութիւններ *Mirs* տիտղոսը կը ներկայացնէ : Ընդհանրապէս կը զուրցուի *Միս Սարաա*, *Միս Մէրի*, և այլն . բայց պէտք է դիտել, առաջին . որ ընտանեաց մը երէց աղջիկը, ըստ պատշաճութեան օրինաց, չկրնար իր մկրտութեան անուամբը կոչուիլ խօսուած երիտասարդ մը որ ձէնը, *Միս դըր Սիտտընսի* երէց աղջիկը իրեն հարանացնելու վրայ է, չի կրնար զան *Միս ձէն* կոչել, այլ նա մանաւանդ *Միս Սիտտընս* . որ ազնուատոհմ ընտանիքի մը երէց աղջիկը ոչ երբեք իր մկրտութեան անունը կը կրէ . դեռ որորոցը եղած ժամանակը՝ է միշտ *Միս Գրոուֆըրտ* կամ *Միս Պրտտէզ* . գ . կրսեր ճիւղի մը երէց աղջիկը՝ ամեն անգամուն որ երէց ճիւղին երէց հօրեղբորորդոյն հետ կը գտնուի, ընտանեաց մականուամբ կոչուելու իրաւունքը կը կորսնցնէ . ու ան ատեն կ'ըլլայ *Միս Իւլիա*, *Միս Արապէլլա* . . . . Բայց հօրեղբորորդին զնացածին պէս՝ մէկէն կը դառնայ նորէն կ'ըլլայ միս Գրոուֆըրտ :

Տիտղոս ունեցող ընտանեաց կրտսեր տղայք պատուելի տիտղոսին իրաւունքն ունին, ու կը կոչուին *honorable Mr. Mrs. կամ Miss* :

Քաղաքացւոց տներուն մէջ ծառայութեան անձանց ամենէն տիտղոս մը չտրուիր ոչ մէկ և ոչ միւս սեռի : Ծառայք իրենց անուամբը կը կոչուին . աղախինք՝ իրենց պարզ մականուամբը : Այսպէս աղախնոյ մը խօսելով կը կանչուի, *Ուէպէր*, *Սմիթ*, *Ուիքօքս*, և այլն :

Ասպետի մը կամ պարոնի մը կինը *lady* տիտղոսը իր ազգատոհմին անուանը վրայ կ'աւելցունէ՝ և ոչ երբեք մկր-